ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА А РМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

05.05.2015թ.
թիվ 82

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77'-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի ապրիլ ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 19 / տասնինը / թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

7 ապրիլի 2015 թվականի N27-Ա

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ 70-ՐԴ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի ապրիլի 3-ի թիվ 01/07.2/1156-15 գրությունը, **որոշում եմ.**

1. 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ հոբելյանական տարեդարձը պատշաճ և արժանավայել նշելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում հայտարարել <<Հարգանքի տուրքի միամսյակ>>:

2. Համայնքի ղեկավարի տեղակալին՝ /Ա. Եսայանին/ կազմակերպել համայնքում առկա Հայրենական Մեծ պատերազմին նվիրված հուշարձանի տարածքի մաքրման, կանաչապատման և ընդհանուր բարեկարգման աշխատանքները:

3. <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության տնօրենին՝ /Վ. Խուրշուդյանին/ համայնքի դպրոցականների և զինապարտ երիտասարդության հետ կազմակերպել տոնական միջոցառումներ, այդ թվում՝ հուշ երեկույթներ, ցերեկույթներ, որը կխթանի նրանց ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի ապրիլի 7

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

8 ապրիլի 2015 թվականի N28-Ա

<<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2015 թվականի ֆոնդային բյուջեի <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված գումարից ձեռք բերված 14 /տասնչորս/ հատ մանկական մահճակալները նվիրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ և օրենքով սահմանված կարգով ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2015 թվականի ֆոնդային բյուջեի <<Նյութեր և պարագաներ>> հոդվածով նախատեսված գումարից ձեռք բերված շինարարական ապրանքները նվիրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ և օրենքով սահմանված կարգով ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թվականի ապրիլի 8

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

10 ապրիլի 2015 թվականի N29-Ա

ԹԱՏՐՈՆԻ ՏՈՄՍԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի մարտի 20-ի թիվ 01/08.2/884-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N50-Ն որոշումն, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ մշակութային կազմակերպություններ>> հոդվածով նախատեսված գումարից 1915 թվականի ցեղասպանությունից փրկված ընտանիքների անդամների համար ձեռք բերել Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում ներկայացվող <<Գիշերը երգնկայի վրա>> թատրոնի տոմսեր՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, ընդամենը՝ 15 հատ, յուրաքանչյուրը՝ 2 000 ՀՀ դրամ արժողությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թվականի ապրիլի 10

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ապրիլի 2015 թվականի N30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 02/13/1281-15 գրությունը, **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի գյուղապետարանի համայնքային պաշտոնական համացանցային կայքի վարման օրինակելի կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի ապրիլի 16

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2015 թվականի ապրիլի 16-ի
N 30-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտի նպատակն է՝ սահմանել ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի գյուղապետարանի (այսուհետ՝ գյուղապետարան) համացանցային պաշտոնական կայքի (այսուհետ՝ պաշտոնական կայք) վարման կարգը:

2. Պաշտոնական կայքի դոմենային անունն է merdzavan.am:

ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի գյուղապետարանի պաշտոնական կայքը կառավարում է գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետը:

3.Պաշտոնական կայքի վարման համակարգող է հանդիսանում գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետը:

4.Պաշտոնական կայքում պատրաստիր գրանցման են ենթակա օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերը, տեղեկությունները և նյութերը:

5. Համացանցում պաշտոնական կայքի հասանելիությունը. օրվա մեջ 24-ժամյա, շաբաթական 7 օր:

II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

6.Պաշտոնական կայքը նախատեսված է գյուղապետարանի գործունեության մասին տեղեկատվություն տրամադրելու համար:

7.Տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվության բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:

8.Պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հավաստի և ամբողջական:

9.Պաշտոնական կայքում տեղեկատվության հասանելիության ապահովման,

արդիականացման և տեղադրման գործընթացի կազմակերպման նպատակով, համայնքի ղեկավարի իրավական ակտով՝ որպես պատասխանատու հանդես է գալիս կոնկրետ պաշտոնատար անձը՝ պաշտոնի անձնագրին համապատասխան:

10.Պաշտոնական կայքում պետք է տեղադրվեն առնվազն՝

1)գյուղապետարանի

ա. պատմությունը,

բ. ընթացիկ գործունեության մասին տեղեկատվությունը,

գ.կառուցվածքը (հաստիքացուցակ, աշխատակիցների ցուցակ, աշխատակիցների կոնտակտային տվյալներ) և գրաֆիկական պատկերը,

դ. հիմնական խնդիրներն ու գործառույթները,

ե. Կառուցվածքային, իր ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները,

1) այն նորմատիվ ակտերը կամ դրանց հղումները, որոնցով կարգավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը.

2) տեղեկություններ իրականացվող /իրականացված / ծրագրերի մասին (ծրագրերի ցանկը, տեղեկություններ ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, հաշվետվություններ).

3) գյուղապետարանում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվություն.

4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերը և որոշումները (համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներ, աշխատակազմի քարտուղարի հրամաններ).

5) համայնքի ղեկավարի, ավագանու ուղերձները, ավագանու կանոնակարգը.

6) գյուղապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, զեկույցներ և այլ տեղեկատվություն.

7) տեղական ինքնակառավարման մարմին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դիմումների, տեղեկատվություն ստանալու մասին հարցումների և այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը, դրանց լրացման վերաբերյալ ցուցումները, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործողությունների (անգործությունների) վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը.

8) թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները՝ թափուր պաշտոնների ցանկը, ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին.

9) պաշտոնական միջոցառումների մասին տեղեկությունները, որոնք կազմակերպվում են գյուղապետարանի կողմից (ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի մոտ խորհրդակցություններ և այլն),

10) համայնքի, գյուղապետարանի մասին ՀԼՄ-ներում հրապարակումները կամ դրանց հղումները.

11) գյուղապետարանին կամ դրանց պաշտոնատար անձանց տրված մրցանակներն ու շնորհակալագրերը.

12) Համայնքի ղեկավարի, ավագանու անդամների անունները, ազգանունները, կենսագրությունները, կոնտակտային տվյալները.

13) համայնքի զարգացման ծրագրերը.

14) տեղական տուրքի և վճարների դրույքաչափերը.

15) համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.

16) Գյուղապետարան կողմից մատուցվող ծառայությունների (այդ թվում անցանց), ընթացակարգերի նկարագրություն, դրանց վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները.

17) հղումներ պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության, համապատասխան մարզպետարանի և, առկայության դեպքում, նաև իր ենթակայության մարմինների պաշտոնական կայքերին.

18) գյուղապետարանի կոնտակտային տվյալները՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հասցեի քարտեզային պատկերը, հեռախոսահամարները, ֆաքսը.

19) Գյուղապետարանի բյուջեի եկամուտների և ծախսերի պլանը, եկամուտների և ծախսերի կատարողականները, բյուջեի մուտքերը.

20) համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող

հողամասերի, շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն.

21) համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը.

22)գնումների մասին հայտարարությունները.

23)համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը.

24)տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը (համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուները, ընտրատեղամասերը, ընտրացուցակներ, ընտրությունների արդյունքներ և այլն).

25) ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակներ.

26)տեսաձայնային նյութեր և նկարներ.

առցանց հարցումներ.

11. Սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված տեղեկությունները կայքում չեն հրապարակվում, եթե դրանք՝

1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ.

4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք.

5) խախտում են հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

12. Չի թույլատրվում պաշտոնական կայքում տեղադրել գովազդային բնույթի տեղեկատվություն՝ բացառությամբ սոցիալական գովազդի:

13. Բացի սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված տեղեկություններից՝ պաշտոնական կայքում կարող է տեղադրվել այլ լրացուցիչ տեղեկություն:

14. Պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվությունը հրապարակվում է պարտադիր հայերենով, իսկ ռուսերենով, անգլերենով և այլ լեզուներով՝ ըստ հնարավորության:

15. Պաշտոնական կայքում այլ լեզուներով առկա տեղեկատվությունը պետք է համապատասխանի հայերենով ներկայացված տարբերակին:

16.Պաշտոնական կայքում տեղադրված նյութերը պետք է պարունակեն հղումներ տեղեկատվության աղբյուրներին, հակառակ դեպքում դրանք կհամարվեն տվյալ մարմնի պաշտոնական տեղեկատվություն:

III. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17.Պաշտոնական կայքի գործունեության կազմակերպմանը մասնակցում են հետևյալ սուբյեկտները՝

1) տեղեկատվության բովանդակության պատասխանատուներ.

2) տեղեկատվություն տրամադրողներ.

3) կայքի ադմինիստրատոր (ադմինիստրատորներ):

18.Տեղեկատվության բովանդակության պատասխանատուները համայնքային ծառայողներ կամ պայմանագրային աշխատողներ են:

19.Տեղեկատվության բովանդակության պատասխանատուները պաշտոնական կայքում տեղադրելու համար հավաքագրում, մշակում, տեղադրում և հեռացնում են նյութերը:

20.Գյուղապետարանը ապահովում է տեղեկատվական նյութերում ուղղագրական կանոնների պահպանումը, հեղինակային և հարակից իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:

21.Տեղեկատվություն տրամադրողները պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով ապահովում են իրենց ոլորտի գործունեությանն առնչվող հավաստի և թարմացված տեղեկատվության նախապատրաստումը և փոխանցումը տեղեկատվության բովանդակության պատասխանատուին:

22.Կայքի ադմինիստրատորը նշանակվում է պաշտոնական կայքի գործունեության աշխատանքների համակարգման համար և իրականացնում է՝

1) կայքում գրանցված գյուղապետարանի աշխատակիցների, այլ անձանց իրավա-

սությունների տրամադրում և զրկում.

2) կայքի աշխատանքի մշտադիտարկում.

3) տեղեկատվության բովանդակության պատասխանատուներին կայքի շահագործման, անվտանգության ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում.

4) կայքի տվյալների շտեմարանի պահուստային պատճենում և տեղեկատվության անվտանգության ապահովման աշխատանքներ.

5) կայքի անխափան աշխատանքի ապահովման տեխնիկական աշխատանքի իրականացում, այդ թվում՝ սերվերի ծրագրային և տեխնիկական սպասարկում, հակավիրուսային ծրագրերի թարմացում.

6) սերվերի աշխատանքի մշտադիտարկում.

7) կայքի գործունեության խափանման ժամանակ (ծրագրի կամ սարքավորման անսարքություն, կապուղիների խափանում, տվյալների շտեմարանների չթույլատրված մուտքի, տվյալների զանգվածների խափանում և այլն) անհապաղ տեղեկացնում է գյուղապետարանի ղեկավարությանը և կայքը սպասարկող մասնագիտացված կազմակերպությանը (եթե առկա է այդպիսի կազմակերպություն): Ձեռնարկվում են միջոցներ՝ տեղեկատվական ենթակառուցվածքի գործառնության նորմալ ռեժիմի վերականգնման համար:

IV. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ

23. Պաշտոնական կայքի տեղեկատվությունը բաժանվում է երեք մասի՝

1) ընդհանուր հասանելի

2) մասնագիտական հասանելի

3) տեխնոլոգիական տեղեկատվություն:

24. Տեխնոլոգիական տեղեկատվությունը տեղեկատվական անվտանգության ղեկավարման համակարգին, ինչպես նաև տեղեկատվական համակարգի ղեկավարման և տեղեկատվության (հասցեների, ազգանունների, նույնականացման տվյալների, օգտագործողի և տեխնիկական անձնակազմի գաղտնաբառերի, համակարգի օբյեկտներին հասանելիության իրավունքների, տվյալների բազաների, համակարգերի և դրանց պաշտպանության ապահովման, աշխատանքային չափորոշիչների հավելվածների մասին տեղեկատվություն) մշակման եղանակի վերաբերյալ տվյալներն են:

25.Ընդհանուր հասանելիության տեղեկատվությունը պաշտոնական կայքում տեղադրված և տեխնոլոգիական տեղեկատվություն չհանդիսացող տվյալներն են:

26.Մասնագիտական հասանելիության տեղեկատվությունը հասանելի է միայն գյուղապետարանի աշխատակիցներին, ովքեր ունեն համապատասխան իրավասություններ.

27.Տեխնոլոգիական միջոցների կիրառումը պետք է ապահովի պաշտոնական կայքի տեղեկատվության պահուստային պատճենման և տվյալ տեղեկատվության վերականգնման գործընթացը:

28.Գյուղապետարանների կայքերի սերվերներում կիրառվող էլեկտրոնային ծառայությունների (բաց պորտերի) ցանցային հասանելիությունը պետք է սահմանափակվի:

V. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

29.Պաշտոնական կայքի ղեկավարման և գործունեության ապահովման ժամանակ գյուղապետարանը ղեկավարվում են տեղեկատվական անվտանգության ու տեղեկատվության պահպանման ապահովման ոլորտի գործող օրենսդրությամբ և ազգային ստանդարտներով:

30.Գյուղապետարանը պաշտոնական կայքի ղեկավարման, տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքների և տեղեկատվական համակարգերի շահագործման ժամանակ պարտավոր է ապահովել քաղաքացիների անհատական տվյալների գաղտնիության իրավունքը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

16 ապրիլի 2015 թվականի N31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20- Ի N 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղապետարանի համայնքային պաշտոնական համացանցային կայքի վարման օրինակելի կարգի 9-րդ կետը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 09-Ա որոշմամբ հաստատված N2 հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թվականի ապրիլի 16

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2015 թվականի ապրիլի 16-ի
N 31-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20- Ի N 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՐԱՑՈՒՄԸ

Որոշման N2 հավելվածի <<Իրավունքներն ու պարտականությունները>> պարբերության 11-րդ կետի իա) ենթակետից հետո լրացնել .

իբ) պատասխանատու է գյուղապետարանի համայնքային պաշտոնական համացանցային կայքի վարմանը:

ԱՇԻԱՏԱԿԱԶՄԸ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐԾԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

27 ապրիլի 2015 թվականի N32-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով 2003 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագրի 8.2 կետը և 2015 թվականի ապրիլի 22-ին Ազնիվ Հովհաննիսյանի ներկայացրած դիմումն, **որոշում եմ.**

1. Լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2003 թվականի սեպտեմբերի 29-ի N29 որոշման հիման վրա Ազնիվ Հովհաննիսյանի հետ 0,5333 հեկտար հողամասի նկատմամբ կնքված վարձակալության պայմանագիրը:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ լուծված պայմանագրի մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում՝ պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2015 թվականի ապրիլի 27

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1 ապրիլի 2015 թվականի N4-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի մարտի 12-ի N 01/08.2/884-15 գրությունը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները կազմակերպելու և անցկացնելու համար, **կարգադրում եմ.**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թվականի ապրիլի 1

գ. Մերձավան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2015 թվականի ապրիլի 1-ի
N 4-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Գրիգորյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավար
Տեղակալ՝ Արևհատ Եսայան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ
Անդամներ՝ Վեմիր Խուրշուդյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի << Կրթություն և մշակույթ >> միացյալ տնօրինության տնօրեն
Վոլոդյա Մարտիրոսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն
Գայանե Սարգսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված նախատեսվող միջոցառումների

Հ/հ	Միջոցառման անվանումը	Միջոցառման անցկացման վայրը	Անցկացման ժամկետը	Պատասխանատուները
1.	Հայոց ցեղասպանության 100 -րդ տարելիցին նվիրված ցուցափեղկի տեղադրումը մշակույթի տանը, գրադարանում, դպրոցում	Մշակույթի տուն Դպրոց Գրադարան	Ապրիլի 1	Վ.Խուրշուդյան Գ. Սրապյան Վ.Մարտիրոսյան
2.	Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանիշ հանդիսացող անմոռուկների պատրաստում աշակերտների կողմից	Դպրոց	Ապրիլի 1-ից ապրիլի 10	Վ.Մարտիրոսյան
3.	<<Հիշում եմ և պահանջում>> խորագրով անկյան ձևավորում՝ նկարների, իրերի ցուցահանդես նվիրված ցեղասպանության 100 -րդ տարելիցին	Դպրոց Մշակույթի տուն	Ապրիլի1-ից Ապրիլի 3	Վ.Մարտիրոսյան Վ.Խուրշուդյան
4.	Համայնքի գրադարանում հայոց ցեղասպանության 100 -րդ տարելիցին նվիրված անկյան ձևավորում, գրքերի ցուցահանդես, ընթերցանության երեկոների կազմակերպում, զրույց- զեկուցումներ	Գրադարան	Ապրիլի10ից Ապրիլի 21	Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Գ. Սրապյան
5.	Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հուշակոթողի տարածքի բարեկարգում	Հուշակոթողի հարակից տարածք	Մինչև ապրիլի 19	Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան
6.	Ծառատունկի կազմակերպում Մերձավան գյուղում կառուցվող Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հուշակոթողի տարածքում	Հուշակոթողի հարակից տարածք	Մինչև ապրիլի 19	Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան

7.	Դպրոցի բակում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված խաչ-քարի օծման արարողություն, ներառելով. - Ելույթ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին. - Խորհրդանիշ անմոռուկների բաժանում	Դպրոցի բակ	Ապրիլի 17	Լ. Գրիգորյան Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան
8.	Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստ: <<Փայլող աստղեր>> պարի համույթի ելույթը	Մշակույթի տուն	Ապրիլի 18 ժամը 15:00	Լ. Գրիգորյան Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան Ժ.Գևորգյան
9.	Համայնքի մանկապարտեզում ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ցերեկույթ	Մանկապարտեզ	Ապրիլի 20	Լ. Գրիգորյան Ա. Եսայան Գ.Սարգսյան
10.	Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հուշարձանի բացման միջոցառում, ներառելով. -Խորհրդանիշ անմոռուկների բաժանում - Նկարների ցուցահանդես՝ ցեղասպանությունից փրկված ընտանիքների ներկայացուցիչների մասնակցությամբ, <<Փայլող աստղեր>> պարի համույթի ելույթը	Հուշարձանի տարածք	Ապրիլի 22 ժամը 16:00	Լ. Գրիգորյան Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան Գ.Սարգսյան Ս.Մկրտչյան Ժ.Գևորգյան
11.	Ջահերով երթ նվիրված Հայոց ցեղասպանության 100 -րդ տարելիցին	Հուշարձանի տարածքից դեպի համայնքի դպրոց	Ապրիլի 22 ժամը 20:00	Լ. Գրիգորյան Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան
12.	Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված	Ք.Էջմածին	Ապրիլի 23	Լ. Գրիգորյան Ա. Եսայան

	սուրբ պատարագի մասնակցություն Էջմիածնում			Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան Ս.Մկրտչյան Գ.Սարգսյան Համայքի բնակիչներ Բարձր դասարանի աշակերտներ
13.	Հարգանքի տուրքի մատուցում Հայոց ցեղասպանության հուշահամալիրում, նվիրված անմեղ զոհերի հիշատակին	Ք. Երևան	Ապրիլի 24 ժամը 15:00	Լ. Գրիգորյան Ա. Եսայան Վ.Խուրշուդյան Վ.Մարտիրոսյան Ս.Մկրտչյան Գ.Սարգսյան Համայքի բնակիչներ Բարձր դասարանի աշակերտներ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ